Դասավանդման 5 արդյունավետ միջոցներ

Որպես ուսուցիչներ և մանկվարժներ մենք գտնվում ենք մշտապես փոփոխվող իրավիճակում: Ուսուցման ավանդական մեթոդներն ավելի քիչ գործածելի են դարձել, մինչդեռ նոր մեթոդներն առաջին պլան են մղվել: Կրթության ոլորտն այնքան արագ է փոխվում, որ դժվար է իմանալ ինչպիսին կլինեն մեր դասարանները մոտ ապագայում:

Տեխնոլոգիաները անշուշտ այս փոփոխության հիմնական գործոններից են, սակայն միակը չեն և ոչ էլ ամեն ինչի համար լուծում կարող են լինել: Կրթության ոլորտի վրա նաև ազդեցություն ունեն արտաքին գործոնները: Օրինակ՝ այսօրվա համավարակը, ինչը մեծ ազդեցություն է ունեցել կրթության վրա և մինչ օրս էլ ունի:

Համավարակի հետևանքով փակվող դպրոցներն ու համատարած խառնաշփոթը կրթության ոլորտում ստեղծեցին արտակարգ իրավիճակ ու ճգնաժամ, որի սկզբնական շրջանում դասավանդողները ստիպված էին դիմել իմպրովիզացված մեթոդների:

Դասավանդողները ստիպված էին հանկարծակի առերեսվել նոր իրավիճակին, որի հետևանքով ստիպված էին օգտագործել նոր ռազմավարություններ և իրենց ուսուցման մեթոդները հարմարեցնել նոր միջավայրին, որն ամբողջովին այլ է: Հեռավար ուսուցումը դարձել է մեր սովորական առօրյան:

Համավարակը մեզ սովորեցրեց, որ միշտ պետք է պատրաստ լինել փոփոխությունների: Հնարավոր է, որ այն ինչ աշխատում էր երեկ, չաշխատի վաղը: Այդ պատճառով կարևոր է զարգացնել առաջընթացի մտածելակերպ:

Այս հոդվածում կխոսեմ այն հիմնական դասավանդման մեթոդների մասին, որոնք և՛ նոր, և՛ փորձառու դասավանդողները պետք է ներառեն իրենց գործունեության մեջ՝ առավելագույնս արդյունավետ դարձնելու իրենց դասավանդումը ու բարելավելու իրենց սովորողների ուսումը:

1. Համատեղ ուսուցում

Ինչպես գրել է Hall-ը (2017), համատեղ ուսուցումը օգտակար մեթոդ է ուսուցման միջոցներով կիսվելու, համեմատելու և գաղափարներ ձեռքբերելու համար, որի միջոցով ձեր դասավանդման գործընթացը կարող եք առավել առանձնահատուկ դարձնել (էջ 64): Համատեղ դասավանդումը բարելավում է դասավանդողների ինքնավերլուծությունը ու թույլ է տալիս հարստացնելու և ընդլայնելու մասնագիտական զարգացումը: Համացանցային տեխնոլոգիաների շնորհիվ դասավանդողների համար շատ հեշտ է այլ դասավանդողների հետ համագործակցային հնարավորություններ գտնելը: Օրինակ՝ համացանցային ու վիդեո կոնֆերանսների հարթակները գործիքներ են, որոնք հնարավորություն են տալիս այդպիսի համագործակցությանը: Այնպիսի

համագործակցային հարթակներ, ինչպես՝ Zoom-ը, Google Meet-ը և Microsoft Teams-ը, համատեղ դասավանդումը հնարավոր են դարձնում՝ անկախ ժամային ու աշխարհագրական տարբերություններից:

2. Դասավանդման ժուռնալ կամ պորտֆոլիո

Դասավանդման պորտֆոլիոն մասնագիտական արդյունավետ զարգացման միջոց է: Դասավանդման հանդեպ պատասխանատվության զգացումը բարձրացնելուց բացի, այն նաև ապահովում է տվյալների հարուստ բազա, որի միջոցով նրանք կարող են հետևել իրենց առաջընթացին, վերլուծել տարիների ընթացքում կատարած աշխատանքը, հասկանալ ինչն աշխատում է, ինչը՝ չէ և ինչու, ստեղծել նոր մեթոդներ՝ բավարարելու ժամանակակից դասավանդման պահանջները:

Դասավանդողի պորտֆոլիոյում կարևոր մաս է կազմում վերլուծությունը, ինչը ինքնաճանաչողական գործընթաց է և թույլ է տալիս դասավանդողներին ոչ միայն սովորողներին ճանաչել, այլ նաև իրենք իրենց (Roe & Vukelich, 1997, էջ 16):

Կան բազմաթիվ համացանցային գործիքներ, որոնցով դասավանդողները կարող են ստեղծել առցանց պորտֆոլիոներ; այս առումով իմ նախընտրած գործիքը Google Sites-ն է: Եթե ցանկանում եք ավելին իմանալ այս հարթակի կրթական ներուժի մասին, ապա կարող եք այցելել՝ Google Sites guide:

Վերլուծության համար սիրում եմ օգտագործել Google Docs-ը: Արդեն մի քանի տարի է, ինչ օգտագործում եմ այն իմ վերլուծական աշխատանքների համար: Սակայն պարտադիր չէ, որպեսզի ձեր ուսումնական աշխատանքը ջ փորձը գրանցեք միայն տեքստային տարբերակով. այն նաև հնարավոր է իրականացնել այլ միջոցներով, ինչպես օրինակ՝ վիզուալ տարբերակով ու ինֆոգրաֆիկաներով (Canva, Adobe Spark ու Illustrator), տեսանյութերով (Wevideo և Camtasia) համացանցում հիպերկապված նյութերով, փոդքասթներով և այլն:

3. Դասավանդման գնահատում/հաշվետվություն

Դասարանում հետադարձ կապի ձևավորման համար հաճախակի գնահատում անցկացնելը հիանալի եղանակ է տեղյակ լինելու ձեր դասավանդման արդյունավետության մասին: Ինչպես վերլուծության մեջ, այնպես էլ սովորողներից ստացած արձագանքի շնորհիվ հնարավոր է կարևոր եզրակացությունների գալ ձեր դասավանդման մեթոդների մասին:

Հարցումներ, հարցաթերթեր, խաղերի վրա հիմնված ստուգումներ և այլն. այս բոլորը հարցերի տեսակներ են, որոնք կարող եք կիրառել՝ դասարանում գնահատում անցկացնելու նպատակով: Միշտ զարմանում եմ, թե դասի վերջում տված այս երկու հարցերն ինչքան տեղեկություն են պարունակում.

- Ի՞նչ սովորեցիր:

- Ի՞նչը դժվարությամբ սովորեցիր:

Չնայած գոյություն ունեն շատ թվային գործիքներ, որոնցով կարող եք ստեղծել գնահատման մեխանիզմներ, նախընտրում եմ խաղերի վրա հիմնված հարթակներ, ինչպիսին են՝ Quizalize, Blooket, Quizizz, Kahoot ու Quizlet: Այս գործիքներով կարող եք ստեղծել խաղերի տեսքով հարցաշարեր, որոնք բոլոր սովորողները կարող են դասարանում կատարել կամ հանձնարարել որպես տնային աշխատանք: Այս բոլոր գործիքներն ունեն հաշվետությունների բաժին, որտեղ կարող եք տեսնել տվյալներ՝ սովորողների անհատական աշխատանքի և առաջընթացի վերաբերյալ: Որոշ հարթակներ նույնիսկ թույլ են տալիս հաշվետվությունները միանգամից ցույց տալ ծնողներին:

4. Խառը ուսուցում

Ներկայումս կրթության մեջ վերելք են ապրում ուսուցման խառը եղանակները: Համավարակից հետո կրթական միջավայրում կարևոր է դառնում թվայնացումը, և դասավանդողներից պահանջվում է մտածել նորովի, ուսուցումը հարմարեցնել արագ փոփոխվող պայմաններին:

Խառը ուսուցումը մեթոդ է, որը միավորում է դասարանում և առցանց միջավայրում ուսուցումը: Ըստ Էդինբուրգի համալսարանի «խառը ուսուցումը ոչ ամբողջովին դասարանում, ոչ էլ հեռավար կրթությունն է. այն ստեղծված է սովորողների համար մի տարբերակից մյուսին հեշտությամբ անցնելու համար: Խառը ուսուցումը բաղկացած է երկուսի համադրությունից, օրինակ՝ սովորողները կարող են սովորել դասարանում, կամ վիրտուալ դասարանում՝ լինելով նույն ժամային գոտում, կամ հեռավար եղանակով՝ գտնվելով տարբեր ժամային գոտիներում:»

Վիդեո կոնֆերանսների հարթակներ ու գործիքներ, ինչպիսին են Google Classroom-ը, Google Sites-ը, Flipgrid-ը, Wakelet-ը, Funbrain-ը, այս առումով հատկապես ներուժ ունեն ու կարող են կիրառվել դասարանում ուսումը լրացնելու և ամրապնդելու համար: Դրանով կարող եք ստեղծել, խմբագրել ու սովորողների ցույց տալ վիդեո ռեսուրսներ և ուսումնական նյութեր, իսկ դասարանում ժամանակը տրամադրել անհատական ուսուցմանը ու վերանայմանը:

5. Սովորողների համար աջակցություն

Սովորողների վրա կենտրոնացված մանկավարժության մեջ էական է աջակցությունը. դա նշանակում է սովորողներին տալ ազատություն (ինչպես նաև դրա հետ եկող պատասխանատվությունը) իրենց կարծիքներն արտահայտելու ու մասնակցելու դասարանում և դրանից դուրս իրենց ուսման շուրջ որոշումներին:

Սովորողները սիրում են, երբ իրենց կարծիքը գնահատվում է ու իրենց կրթության մեջ դեր է խաղում:

Ինքնարտահայտման ազատության հետ գալիս է իրենց ուսման պատասխանատվությունը: Ձայնն ու պատասխանատվությունը, իմ կարծիքով, փոխկապակցված են:

Գոյություն ունեն բազմաթիվ առցանց գործիքներ և հարթակներ, որոնք կարող եք կիրառել սովորողների հետ: Իմ կողմից սիրվածը Flipgrid Shorts-ն է: Սովորողներին թույլ է տալիս տարբեր նյութեր և բովանդակություն պարունակող տեսանյութեր նկարել և դրանք ցույց տալ այլոց:

Հոդվածը թարգմանված է

Educational Technology and Mobile Learning կայքից

5 Incredibly Effective Teaching Practices

(https://www.educatorstechnology.com/2012/06/10-teaching-practices-every-21st.html)